

the FUTURE ARMENIAN

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ.
ԽՈՐՀԵՆՔ ՄԻԱՄԻՆ

«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» հանրային նախաձեռնությունն է՝ մեկնարկած հայերի և ամբողջ աշխարհից Հայաստանի բարեկամների կողմից, որի նպատակն է ստեղծել Հայաստանի և հայ ազգի կայուն զարգացման շուրջ համընդհանուր փոխըմբռնման շրջանակ: Յուրաքանչյուր անձ կարող է ներգրավվել, դառնալով ստորև ներկայացված 15 նպատակների ցանկի համանախաձեռնող, մասնակցել «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» ծրագրի ԻՆՉ-երի և ԻՆՉՊԵՍ-ների առաջիկա քննարկումներին և հավաքականորեն ծրագրել հետագա քայլերը:

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ | 15 ՆՊԱՏԱԿ

- Տեսլականի սահմանում.** Հավաքականորեն սահմանել և տեր կանգնել Հայաստանի ապագային:
- Երաշխավորված պետականություն.** Ընդունել մեր անվտանգության դեմ սպառնալիքի առկայությունը և կառուցել ավելի արդյունավետ ու հեռանկարային պաշտպանական համակարգ:
- Պատմական պատասխանատվություն.** Հարգել Հայոց ցեղասպանության նահատակների, այն վերապրածների և նրանց փրկողների հիշատակը միջազգային իրազեկման և մարդասիրական աջակցության միջոցով՝ կանխարգելելու համար մարդկության դեմ բռնությունը, պայքարելու դրա դեմ և վերացնելու համար դրա հետևանքները:
- Ազատ Արցախ.** Երաշխավորել Արցախի ֆիզիկական անվտանգությունը և հաստատել նրա իրավական կարգավիճակը:
- Հայաստան-Սփյուռք միասնականություն.** Հայաստանի և Սփյուռքի փոխհարաբերությունները վերածել փոխադարձության և վստահության վրա հիմնված հարաբերությունների:
- Ուժեղ սփյուռք.** Թարմացնել և ընդլայնել սփյուռքյան կազմակերպություններն ու կառույցները՝ դրանց կենսունակությունն ապահովելու և ողջ աշխարհում հայոց ժառանգությունը պահպանելու համար:
- Ուժեղ դաշինքներ.** Հակազդել մեկուսացմանը և կարևորություն ձեռք բերել՝ տարածաշրջանային և համաաշխարհային ռազմավարական գործընկերությունների միջոցով:
- Հարաճում.** Խթանել մարդկային ու ֆինանսական կապիտալ ներգրավող մրցունակ տնտեսություն:
- Բնակչության աճ.** Կենտրոնանալ Հայաստանի ժողովրդագրական մարտահրավերներին լուծում տալու վրա՝ Հայաստանի ապագան երաշխավորելու համար ապահովելով բնակչության աճ, հայրենադարձություն և մասնագետների ներհոսք:
- Կրթության գերազանցություն.** Առաջնահերթություն հաղորդել կրթությանը՝ որպես աշխարհի հայության բարձրագույն սոցիալական արժեք:
- Գիտության, տեխնոլոգիաների և ստեղծագործականության գերակայություն.** Ներդրումներ կատարել գիտության, տեխնոլոգիաների և ստեղծագործականության մեջ՝ նորարարությունն ու զարգացումը խթանելու համար հատկապես առողջապահության, շրջակա միջավայրի և գիտելիքաիեն տնտեսության ոլորտներում:
- Ողջամիտ կառավարում.** Չարգացնել արդյունավետ և հաշվետու ինստիտուտներ, հավատարիմ մնալ կառավարության ու հասարակության մեջ կատարելության և պրոֆեսիոնալիզմի ձգտմանը:
- Արդար հասարակություն և նվազեցված անհավասարություններ.** Արմատախիլ անել աղքատությունը և հասնել հասարակության մեջ ազնվության և արդարության տիրապետման:
- Ժառանգության պահպանում.** Հիմնվելով մեր եզակի ինքնության ու պատմական փորձի վրա՝ այն օգտագործել ոգեշնչելու և առաջնորդելու համար մեր ապագան:
- Փաստերի վրա հիմնված որոշումների կայացում.** Դեկավարությունից և հասարակությունից պահանջել, որ ազգային որոշումների կայացումը հիմնված լինի ոչ թե պատրանքների, այլ փաստերի վրա:

«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությունը կապված չէ քաղաքական որևէ խմբի կամ կազմակերպության հետ: Այն ֆինանսավորվում է շահույթ չհետապնդող «ՀԱՅԱՍՏԱՆ 2041» հիմնադրամի նախաձեռնողների կողմից՝ Ռիչարդ Ազարնիայի, Արթուր Ալավերդյանի, Նուբար Աֆեյանի, Արամ Բեկչյանի, Դավիթ Թավադյանի, Ռուբեն Վարդանյանի: Այն նպատակ ունի խթանելու Հայաստանի և հայության ապագայի վերաբերյալ հանրային քննարկումները:

Եթե ցանկանում եք աջակցել նախաձեռնությանը կամ ունեք հարցեր, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ հետևյալ էլ. հասցեով՝ discussion@futurearmenian.com: